Հավելված 3
«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ
«Ձեռնարկատիրական գործունեության
վարկավորման» կանոնակարգի

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Վարկային դիմում-հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր

1. Վարկային դիմում-հայտ
2. *Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի դեպքում՝*

➢ իրավասու մարմնի որոշում կամ քաղվածք որոշումից՝ վարկ ստանալու և գույքը գրավադրելու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ),

➢ տնօրենի և 10% մասնակցությունը գերազանցող մասնակիցների անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ), հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ),

➢ հիմնադիր փաստաթղթեր՝ կանոնադրություն, ՀՎՀՀ, պետ. ռեգիստրի վկայական (իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը) (բնօրինակ կամ կրկնօրինակ),

➢ տեղեկանք պետ. ռեգիստրից կանոնադրության փոփոխության և մասնակիցների վերաբերյալ, մասնակիցների բաժնեմասի սեփ. վկայագրեր, ինչպես նաև բաց բաժնետիրական ընկերության համար՝ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված, փակ բաժնետիրական ընկերության համար՝ բաժնետերերի ռեեստր վարողի կողմից տրված տեղեկանք (ներկայացվում են վարկի տրամադրման դրական որոշման դեպքում) (բնօրինակ կամ կրկնօրինակ),

3. *Անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդի դեպքում՝*

➢ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ), հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ),

➢ ՀՎՀՀ, պետ. ռեգիստրի վկայական:

4. Տվյալ ոլորտում աշխատելու համար անհրաժեշտ լիցենզիաները, գրանցման փաստաթղթերը և այլն (բնօրինակ կամ կրկնօրինակ)
5. Ֆինանսական հաշվետվությունները վերջին 2/երկու/ հաշվետու ժամանակաշրջանների համար, աուդիտորական կազմակերպության եզրակացություն (առկայության դեպքում), տեղեկանքներ պարտքերի առկայության մասին (հարկային մարմիններից, սպասարկող բանկերից և դատարանից՝ անվճարունակության և դատական գործընթացի վերաբերյալ) (բնօրինակ կամ կրկնօրինակ)
6. Գործարար ծրագրի կամ տեխնիկա-տնտեսական հիմնավորում (բնօրինակ կամ կրկնօրինակ)
7. Գործող պայմանագրեր և համաձայնագրեր (իրացման, մատակարարման, վարձակալության և այլն), հաշիվ ապրանքագրեր, ակտեր, վճարային հանձնարարագրեր կամ պահանջագրեր և այլն (բնօրինակ կամ կրկնօրինակ)

8. Հաճախորդի դեբիտորների և կրեդիտորների ցուցակը, գումարների չափերը, ձևավորման և վերադրաձման ժամկետները (բնօրինակ կամ կրկնօրինակ)
9. Գործունեության իրականացման վայրի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի (բնօրինակ կամ կրկնօրինակ)
10. Բանկերում առկա հաշիվների քաղվածքներ վերջին 12/տասներկու/ ամիսների համար (բնօրինակ կամ կրկնօրինակ)

11. Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝

- գրավադրվող անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական (բնօրինակ),
- գրավադրվող անշարժ գույքի ձեռքբերման հիմքը (օրինակ՝ գնման-վաճառքի պայմանագիր, նվիրատվության պայմանագիր, ժառանգության վկայական և այլն) (բնօրինակ կամ կրկնօրինակ),
- գրավատուի անձը հաստատող փաստաթուղթ և ՀԾՀ (բնօրինակ),
- գրավատուի ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն (բնօրինակ),
- անշարժ գույքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեյից ստացված միասնական տեղեկանք՝ գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ (կրնկնօրինակ),
- տեղեկանք գրավադրվող գույքի հասցեում հաշվառված անձանց (բնօրինակ),
- գրավադրվող անշարժ գույքի նախնական գնահատման տեղեկանք (բնօրինակ):

12. Շարժական գույքի գրավադրման դեպքում՝

- գրավադրվող տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր (բնօրինակ կամ կրկնօրինակ),
- գրավադրվող տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի վկայական (բնօրինակ),
- գրավադրվող տրանսպորտային միջոցի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք համապատասխան մարմնից (բնօրինակ),
- գրավատուի անձը հաստատող փաստաթուղթ և ՀԾՀ (բնօրինակ),
- գրավատուի ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն (բնօրինակ),
- գրավադրվող տրանսպորտային միջոցի նախնական գնահատման տեղեկանք (բնօրինակ):

Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր

1. Երաշխավոր(ներ)ի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ)
2. Երաշխավոր(ներ)ի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
3. Տեղեկանք Երաշխավոր(ներ)ի աշխատավայրից, որտեղ պետք է նշվի վերջինիս զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը (բնօրինակ)

4. Այն դեպքում, երբ Երաշխավոր(ներ)ը չի աշխատում, եկամուտը հաստատող այլ փաստաթղթեր և/կամ եկամուտների վերաբերյալ հայտարարություն (բնօրինակ)
5. Գրավադրվող անշարժ գույքի վերջնական գնահատման հաշվետվություն (բնօրինակ)
6. Գրավադրվող անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական (բնօրինակ)

Ելնելով փարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Ընկերությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին